

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ-2

Նոր տարվա նախօրյակին, հատկապես նոր հազարամյակ մուտք գործելուց առաջ բոլորին համակում է բարեփոխությունների սպասումը եւ երազանքների իրագործման հույսը: Եվ ամեն մեկը յուրովի է ամփոփում արդյունքները, այդ թվում՝ նաեւ Երեւանի մամուլի ակումբը:

Երեւանի մամուլի ակումբի ամենամյա լրագրողական մրցանակների հանձնման հերթական՝ երկրորդ արարողությունը տեղի ունեցավ 1999թ. դեկտեմբերի 29-ին նորաբաց «Զանգու» ռեստորանում: Այս անգամ ԵՄԱ-ին միացան ՀՀ-ում ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի եւ Ֆրանսիայի դեսպանությունները, որոնք հաղթողներին հատուկ մրցանակներ տվեցին:

Անցյալ տարվա համեմատությամբ մրցանակակիրների թիվն աճել էր գրեթե երկու անգամ, բայց անցյալ տարվա նման էլ հաղթողների անունները մինչեւ վերջին պահը գաղտնի էին պահվում: Ժյուրիի անդամները՝ «Հայացք Երեւանից» ամսագրի գլխավոր խմբագիր Վալերի Այդինյանը, ԵՄԱ փորձագետ Մեսրոպ Հարությունյանը, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեւորգյանը, Հայաստանի ազգային հեռուստատեսության գործադիր տնօրեն Տիգրան Նաղդալյանը եւ ԵՄԱ առընթեր խոսքի ազատության հանձնախմբի նախագահ Վիգեն Սարգսյանը տոկունորեն լուր էին եւ խորամանկ ժպտում միայն:

«Հրապարակախոսական հոդվածների համար» անվանակարգում հաղթող դարձավ գրող-հրապարակախոս Գրիգոր Զանիկյանը («Հայ զինվոր» շաբաթաթերթի գլխավոր խմբագրի տեղակալ)՝ «հայ լրագրության մեջ այդ ժանրի զարգացման գործում հատուկ ներդրման համար»:

«Հետաքննության ժանրով լավագույն ֆիլմաշարի համար» անվանակարգում մրցանակակիրները՝ Էդիկ Բաղդասարյանը («Վերսուս» ստուդիայի տնօրեն) եւ ստեղծագործական խումբը՝ վճռեցին յուրովի տնօրինել մրցանակը: Մրցանակ-հեռուստացույցը, որը յոթերորդ նվերն էր անցյալ տարվա դեկտեմբերի սկզբին Գորիսի բանտի մասին ֆիլմի ցուցադրությունից ի վեր, ուղարկվեց բանտարկյալներին:

«Հոկտեմբերի 27-ի իրադարձությունների լավագույն լուսաբանման համար» անվանակարգում նշվեցին լրագրողներ Նարինե Դիլբարյանը («Ազգ»), Աննա Իսրայելյանը («Առավոտ»), Մարինա Մկրտչյանը («Գոլոս Արմենիի»), իսկ «Ծայրահեղ իրավիճակում արժանապատիվ կեցվածքի համար»՝ Գոհար Սարգսյանը («Ռեսպուբլիկա Արմենիա») եւ Ռուզան Խաչատրյանը (Հայաստանի ազգային հեռուստատեսություն): Վալերի Այդինյանը մաղթեց «մեր կանանց, ովքեր իրենց տղամարդավարի պահեցին», այսուհետ էլ նույնքան խիզախ ու կանացի լինել: Նարինե Դիլբարյանն արժանացավ նաեւ Մեծ Բրիտանիայի դեսպանության հատուկ մրցանակին: Իսկ մրցանակների հանձնումից մեկ ամիս անց Գերմանիայի դեսպանությունը որոշեց Գոհար Սարգսյանին լրացուցիչ պարգևատրել Բեռլին ուղևորությամբ՝ մասնակցելու Էքսպո-2000 ցուցահանդեսին:

«Ծայրահեղ իրավիճակում հեռուստալրատվական ծառայության աշխատանքի համար» պարգևատրվեցին «ԱԸ» եւ «Ա1+» հեռուստաընկերությունները: Նույն այդ կայանները ստացան նաեւ ԱՄՆ եւ Ֆրանսիայի դեսպանությունների հատուկ մրցանակները. Երկշաբաթյա փորձառություն Բոստոնում՝ «ԱԸ» հեռուստաընկերության լրագրողներից մեկի համար եւ ուղեւորություն Փարիզ՝ «Ա1+»-ի համար:

Շավարշ Քոչարյանը (գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերով խորհրդարանական մշտական հանձնաժողովի նախագահ)՝ «զանգվածային լրատվության միջոցների հետ ակտիվ աշխատանքի եւ լրագրողական աշխատանքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի համար» արժանացավ հատուկ մրցանակի: Գերմանիայի դեսպանության անունից Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամի ներկայացուցիչ Նաիրա Գեւորգյանը նրան արժեքավոր գիրք նվիրեց, իսկ ԵՄԱ-ն՝ ակնոցի շրջանակ՝ առանց ապակիների, թող ինքը որոշի, թե այսուհետ ի՞նչ ապակիներով պիտի նայի մամուլին:

«Ազատություն» ռադիոկայանի Երեւանի գրասենյակի ներկայացուցիչներին «արտասահմանյան լրատվամիջոցներում Հայաստանի իրադարձությունների օպերատիվ եւ անաչառ լուսաբանման համար» մրցանակը հանձնելիս ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության պետ Տիգրան Հակոբյանը խոստովանեց. «1994 թվականին ես արգելեցի այդ ռադիոկայանի հեռարձակումը, իսկ հետագայում չկարողացա դեմ գնալ հասարակության պահանջին եւ ժամանակին ուղղեցի սխալս...»: «Ազատությանը» հատուկ մրցանակ հանձնեց նաեւ «Զանգու» ռեստորանի տնօրինությունը՝ ամանորյա հանդեսին մասնակցելու հրավիրատուն:

Իրինա ԶՈՀՐԱԲՅԱՆ

«Երեւանի մամուլի ակումբ»

Տեղեկագիր

N 1 (30) հունվար-փետրվար 2000